


8309

DÉCRET PRÉSIDENTIEL N° 8013

Autorisation du Conseil
de la Communauté
N° 263 / 18

409

Մ. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ



Պէշրոբանայ զաղուրը կ'օժտէ Լիբանանի մայրաքաղաքը՝ Երևան
գեղեցիկ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂ.ԵՑԻՈՎ, մը եւս

NOUVELLE ÉGLISE ARMÉNIENNE DE REMEYL
Solennités de Consécration et de Première Messe Pontificale

281.6
U-11

ՄԵՐ ՆԱԽՆԻՔՆԵՐՈՒՆ

ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ...

— Ո՛ր մէկ արգելք կրնայ նուազեցնել հայ կեանքի արշաւը դէպի նոր արշալոյս:

— Թող պարտութեան առաքեալները լոնն որ հայ վերաշինութեան ակնահոս եռանդը կրկնապատկուի:

Տարագիր հայը կանգնեց փայտաշէն դպրոցն ու եկեղեցին իր վրանին մօտ:

Այժմ ան կը վերականգնէ ըստ կարելոյն իր վաղեմի քարաշէն եւ փառահեղ դպրոցն ու եկեղեցին իր սեփականութեանց մօտ:

1919: Մեծ ազգի բեկորք՝ խեղճ վրաններու տակ — թշուառութիւն . . . հիւանդութիւն . . . օտարութիւն:

1934: Հայ մարուր թաղեր, քարաշէն դպրոցներ եւ եկեղեցիներ, բուժարան, կաթողիկոսարան եւ Լիբանանեան Ա. կարգի շքանշան մեր Ծերունագարդ Հայրապետին կուրծքը. քաղաքացիական իրաւունք:

Ահա 15 տարուայ ընթացքին Լիբանանի եւ Սուրիոյ հայութեան հոյակապ կառույցքը:

Մի՛ մոռնաք որ միայն եկեղեցական գոյութիւնով ցայժմ ապրեցաւ հայը.

եկեղեցին ազգին համար հաւաքական ոյժ մը, միութեան կեդրոն մը եղած է: Ան եղած է մեզի հայրենիք մը:

Հայժէր, ձեր զաղութին ինչպէս նաեւ ձեր անձնական շահուն համար պէտք է զօրացունէք Լիբանանի եւ Սուրիոյ մէջ Հայաստանեայց եկեղեցիի դիրքը:

ՅՅԼԵԶ
Ա-Ա

04 NOV 2009



Ն. Ս. Օ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇԻ
ՏԱՆԵ ԿՈՒԼԿՈՅ

S. S. le Catholicoſ SAHAG II dont le Siège est à Antelias (Liban)

...Զգուշացէք այլեւս անփայլ եւ անհրապոյր աղօթատեղիներ շինել տալէ . . . յարգեցէք ձեր ազգային պատմական բարձր արժանապատուութիւնը . . . քիչ բայց լաւ . . . ապա թէ ոչ Պէյրութի նոր բայց խղճալի Անի քաղաքի մը պիտի նմանի. իսկ ձեր մեծ ծնունդը կը քաջալերեմ եւ յաջողութիւն կը մաղթեմ:—

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Ռեմէյլ թաղի կարուածատէր հայերու գիմովին վրայ, մեծահարուստ հանգուցեալ Սալիլ Պէտէվին եկեղեցիի մը շինութեան պայմանի տակ հայերուն նուիրեց հազար կանգուն քառակուսի արտ մը: Այդ ժամանակի առաջնորդը Տոմոնի Սրբազան հետապնդելով նուիրատուն խոստումը՝ արտին դադար ապահովեց Գաւառական ժողովի Ատենապետ Տիար Յակոբ Տէր Մելգոնեանի նիւթական օժանդակութեամբ:


Քաղաքական ժողովի թիւ 263 / 18 և 23 Յունիս 1930 թուակիր հրամանագրի, ինչպէս նաև Հանրապետութեան Նախագահի թիւ 8013 հրովարտակի և Քաղաքապետութեան որոշմագրի համաձայն, ճարտարապետներ Տիար Բարդ Մարտիրոս Ալթունեան, Լեւոն Օտեան, Պետրոս Շիրինեան և Պ. Փապուճեանի օժանդակութեամբ գործի ձեռնարկուեցաւ և սկսուեցաւ տոկուն շէնք մը: Նախապէս աւարտեցան երկու պահարանները որոնք պիտի գործածուէին իբր թաղի մանկապարտէզ - վարժարան:

Դպրոցը բացուեցաւ 1931ին Ռուբինեան Վարժարանի անուան տակ և կնքամայրութեամբ Տիկ. Գոհարիկ Տագէսեանի՝ ծնեալ Ագիրեան:

Եկեղեցին կը կրէր Ս. Երրորդութիւն անունը բայց բարեպաշտ և ազնիւ Տիկինի մը նուէրներով եկեղեցին պիտի կրէ «Ս. Յարութիւն» իմաստայից անունը:

Շինութեան գործին երեք տարիէ ի վեր օժանդակութիւնը բերաւ զանազան ձեւերով գրեթէ բոլոր հայ գաղութը, բայց օտարներ մասնակցեցան հարիւրին 50 մասով: Տեղացի Յոյն, Մարոնի նոյնիսկ իսլամներ արատաձեռնօրէն պատասխանեցին անհատական գիմովներուն: Սիրով մասնակցութիւննին բերին Թրանսպղիններ, Ամերիկացիներ և Հայ Բողոքականներ: Հայ Աւետարանական եկեղեցին ևս չի զլացաւ իր օժանդակութիւնը բերել Մայր եկեղեցիի բարգաւաճումին համար:

(ԸԱՐ. ՏԵԱ 4րդ. էջ)



Ն. Ս. Օ. ԲԱՔԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

S. S. PAPPÈNE I Catholicos-Coadjuteur

«Հայու զաւակներ, հաւատարիմ՝ եղէք Հայաստանեայց եկեղեցւոյն և սիրեցէք զայն. որովհետեւ Հայ Ազգի ՄԱՅՐԷ իր եկեղեցին, և Սուրբ Աւետարանն ալ՝ իր ՀԱՅՐԷ:»

1-8-34

ԲԱՔԳԷՆ Ա. ԿԱԹ. ԿԻՆԿԻՈՅ

Ս. Յարութիւն եկեղեցւոյ միայն շէնքը լրացած պիտի ըլլայ Հոկտեմբերի սկիզբը և պիտի գործածութեան դրուի 14 Հոկտեմբեր 1934էն վերջ: Շէնքին ծեփը, զարդերը և մնացած գործերը մաս առ մաս պիտի շինուին: Այժմէն կրնանք տալ հետեւեալ նուիրատուներու ցանկը.

-Աւագ դուռ - Գեր. Կարօեան Սրբազան

-Նեխ դռները - Տիկ. Ն. Քէհաւան

-Ներկաքայ մասեր - Զէվգավաճեան եղբայրներ
և Գեղամ Տանձրիկեան

-Խորան - Պր. Գրիգոր Աշճեան

-Ս. Յարութեան իւղանկար - Պր. Արսէն Բրժոյեան

-Ս. Աստուածածնայ իւղանկար - Պր. Ս. Փաշկեան

-Ս. Խաչելութեան իւղանկար - Պր. Յ. Մոմճեան


-Ներկ - Պր. Ս. Սաատր

Իսկ թաղին Գարամանցի հայերը կը փափաքին որ իրենց երկրէն բերած թանկագին անօթները նուիրուին Ս. Յարութեան եկեղեցիին: Այս մասին պէտք եղած դիմումները կատարուած են և բոլոր Գարամանցիները ինչպէս նաև կրօնական իշխանութիւնները ուրախութեամբ ընդառաջ կերթան այս խիստ գովելի առաջարկին:

Նրուստղէմի Պատրիարքը Ն. Ս. Թորգոմ Արքեպիսկոպոսը ինչպէս նաև Գեր. Լուսարարապետը խոստացան իրենց կարելին ընել Ս. Յակոբի վանքէն նուիրելու խաչ, սկիւն, բուրվաս և այլն:

ԹԵՄԻՆ ԱՊՍԳԱՆ

Ս. Յարութեան եկեղեցին կը կանգնի Ազգաւեցի ստորոք: Թաղերուն շուրջի ընդլայնումը եւ Քաղաքապետութեան ծրագիրները նկատի առնելով, Ս. Յարութեան եկեղեցին կեդրոնը պիտի ըլլայ մեծ եւ հայաբնակ թաղերու: Այժմէն արդէն իր շուրջը զգալիօրէն կը ընդլայնի հայ թաղերը եւ իր թեմին կը պատկանի մօտ 3 հազար հոգի:



ԳԵՐ. Տ. Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԿԱՐՕԵԱՆ

ԿԱԹ. ՓՈԽ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

MGR. Y. GAROYAN ARCHÉVÊQUE DE BEYROUTH

Vicaire Catholical du Liban

«...Մի՛ր ուրեմն հոն (Ս. Եկեղեցի). մի՛ր նախաձեռնութիւնը յուսովն ու հաւատովը...»

Ո Ր Ո Շ Մ Ն Ա Գ Ի Ր

Ներկայ որոշմագրով կը յայտենն առ որ անկ է, քե Ռոմէյլ քաղի ազգապատկան գետնի վրայ կառուցուած Ս. Յարութիւն նորաշէն եկեղեցիին քեմ նշանակած են 28 Հոկ. 1934 րուականէն սկսեալ, հետեւեալ շրջանը ցնոր սնորհնութիւն:

Նահրի կամուրջէն դեպի քաղաք երկարող հանրականքի գծէն մինչեւ քնկերութեան շէնքի հասնող կէտի հարաւակողմը, անկեց դեպի վեր բարձրանալով գինւորականներու յատուկ շէնքերու արեւմուտքէն անցնող գծին արեւելակողմը, մինչեւ շոգեկառքի ու Ալեյի պողոտային միացման տեղը, մինչեւ կամուրջ:

Սոյն շրջանակին մէջ բնակող Հայ Լուսաւորչական ժողովուրդը վերոյիշեալ րուականէն սկսեալ ծովի կը յայտարարեն սոյն նորաշէն Ս. Յարութիւն եկեղեցւոյն:

Սոյն ծովները պիտի հովութին Արժ. Տէր Արսէն Ա. Քննչ. Տէր Յովհաննէսեանէ:

Կար. Փոխ. Հայոց Լիբանանի
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԿԱՐՕԵԱՆ

ԿՆԻՔ


ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՅԻՆ ԱԻԱՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՏԵԻՔԱԼ ՊԱՐՏԻՐ ԸՐԱՄ Է

	Ս.Ո.
-Կրողիւ Մ. Սահառուի և Որդիին	190
-Երկաթ, » »	153
-Ատաղճ, Տիար Յ. Թորոսեանին	52
-Գործաւորներուն և վարպետին	165
-Աւաղ - սրբապաղ և կոտորուած քար	50
-Զանազան մանր ծախսերու համար	25
Գումար	635


Գործին անմիջական ձեռնարկումին համար հետեւեալ գումարները ստացուած են

Տիկին Ն. Քէհեաեանէ	50
Տիկին Վ. Վարժապետեանէ	25
Նուէր Պր. Լ. Սրապեանէ ընդ Օր. Իրմա	
Պարտիզպանեանի ամուսնութեան տոթիւ	5
	80
Մնացած սրբապաղ	555

Ինչպէս ամէն տարի, այս տարի ևս չնորհիւ առատաձեւուն և բարեխէր նուիրատուներուն՝ վերոյիշեալ սրբապաղը ևս՝ փակուելուն մեծ յոյս ունի Շինութեան Յանձնարարութեան, որուն համարձակութիւնը միշտ ուժ տալով է Լիբանանահայ զաղութիւն զոհողութեան անսպաս ինչպէս անխախտ կամքի չնորհալի մղումէն:




ՄԵՐ ՓԱՅՏԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՄԻՆ
Une vieille église arménienne à Beyrouth (en bois et tôle)




ՆՈՐ ՄԱՐԱՇԵՐ ԳԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՅՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ
Une des nouvelles églises arméniennes de Beyrouth (quartier Nor - Marache)

Ա Յ Յ Ե Լ Ե Յ Է Ք
ԶԱՅՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՎԵՐՋ



Մեր փառսաշէն եկեղեցիներէն նորոշտ տէր եկիւ
 Les Arméniens abandonnent leurs tentes et leurs églises en bois...



Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
 նորոշտ տէր (Յունիս 1934)
 La nouvelle église de Remeil en construction (Juin 1934)

ԱՆՁԱՄԲ ԵԿԵՐ ԵՒ ԴԻՏԵՑԵՐ ԶԱՅՆ
 ԼՐԱՑԱԾ ՎԻՃԱԿԻ ՄԷՉ

ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱԹ. ՓՈԽԱՆՈՐԴԻ 1931ի

ԿՈՉԸ ԵՒ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԳՈՐԾԸ

Սիրելի որդեակր,

Ժամանակին ուրախութեամբ արձանագրած էինք, Ձեր փափաքն ու ջանքերը թաղամասիդ մէջ գտնուած ազգապատկան հողին վրայ եկեղեցի—վարժարանի մը շինութեան համար եւ Առաջնորդարանս նախնական աշխատանքները լրացնելու համար կազմուած Յանձնախումբը վաւերացուցած էր իր 30 Դեկտ. թուակիր պաշտօնագրով:

Այժմ գործի սկսելու ժամանակը հասած նկատելով կը յանձնարարենք Ձեզ, իւրաքանչիւրիդ իր խոստումին համաձայն օժանդակութիւնը բերելու գործելով, նիւթ կամ դրամական նուէրներ ընելով եւ որպէսզի գործը կանոնաւոր ընթանայ...

...Պարտք կը դնենք Յանձնախումբին, 15 օրը անգամ մէ գեկոյց մը պատրաստել շինութեան եւ դրամական կամ այլ նուէրներու գործառնութեանց մասին եւ յայտարարել զայն ժողովրդեան եւ մէկ պատճէնն ալ դրկել Առաջնորդարան:

Ամէն հայ անհատ պէտք է իր օժանդակութիւնը արձանագրել տայ այն ձեւով որ կը փափարի...

Ուրեմն ԿՈՉ կ'ընենք Ձեզ, սիրելի որդեակր՝ յառաջ տանիլ գործը այն թափով, որ շէնքը մինչեւ դպրոցական նոր շրջանի բացումը իբրեւ վարժարան գործածելի դառնայ:

Մենք մեծ յոյս ունինք մեր ժողովուրդի զոհաբերութեան վրայ, հանդէպ կրօնական ու կրթական գործերու եւ վստահ ենք. թէ այս գործն ալ սիրով եւ շուտով գլուխ կը հանէր:

Կարող. Փոխ. Հայոց Լիբանանի
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԿԱՐՕԵԱՆ

— Հաշուական գեկոյցներուն համար տեսնել «Ազգապաթի» թիւ 484-495 եւ 508, եւ Առաջնորդարանի յանձնուած թիւ 1, 2 եւ 3 հաշուետուութիւնները:

— 1931, Հոկտ. 5 բացուած է Ռուբինեան վարժարանը:

— 1934. շնորհիւ գրեթէ բոլոր անոնց որոնց դիմում կատարուած է եւ մասամբ օտար բարեկամներու գործը գրեթէ գլուխ հանուած է:

ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱԹ. ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆՈՐ ԿՈՉԸ

Ս. Յարութեան Եկեղեցւոյ Երեսօրեան աւարտման առթիւ

Սիրելի ժողովուրդ Հայոց,

Եկեղեցւորներուդ անցման է: Ապացոյց աշխարհի ամեն կողմերը կանգնած անհամար Տաճար-տորաններդ եւ հանուր Քրիստոնեւորեան փառք ու պարծանք անքիւ. նահասակ-մարտիրոսներդ, որոնք իրենց օրն ու արեւը սիրայօծար ընծայեցին, հասցատ պահելու համար եկեղեցին ու հիմայ լուսապսակ կը նրնջեն անոր հովանիին տակ:

Ուր որ զսնուեցար երկուքով կամ երեքով սեպհական տունեղ առաջ կանգնեցիր Տիրոջ Տունը. երբեմն Յակոբ Նահապետին ի Բերեկ կանգնածին չափ պարզ ու անպաճույն. երբեմն ալ Սողոմոնեան Տաճարին չափ շեղազարդ ու պերճաւոր:

Ահա մին անոնցմէ, Ռեմեյի Ս. Յարութեան այս նորակեց Եկեղեցին, զոր կառուցիր նիւթական բազմակարօս օրերուդ, աննիւթականին լիւրբիւնը վայելելու համար հոգւոյդ մեջ: Մտի՛ր ուրեմն հոն. մտի՛ր նախանայրեւոյ յուսովն ու հաւատովը: Առաւօս ու երեկոյ երկրպագե եւ երախտագիտութեանդ խունկը բարձրացուր անկէ Անոր՝ որ տառապանքի ընկեր քաւ քեզ: Առանց տառապանքի դու պիտի մոռնայիր գոյութեանդ նպատակը, պիտի մոռնայիր եւ Ասեղծողդ: Ան տառապանք քեզ ընկերացուց որ յիշես զինք: Յիշէ՛ ու կրկնէ ուրեմն զիշեր եւ ցորեկ «Փառք քեզ Աստուծ, փառք քեզ, յապագս ամենայնի փառք քեզ»:

աղօթարար

Կարող. Փոխ. Հայոց Լիբանանի
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ԿԱՐՕԵԱՆ

ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ
ՄԻ ՔԱՆԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՄՆՕՐԶՆԷՔ ԵՒ ՕԾՈՒՄ

(Կիրակի 14 Հոկ. 1934 ժամը 8ին)

Մեծ պատրաստութեամբ հանդիսաւոր արարողութիւնք՝ Լիբ. Կաթ, Փոխ. Տ. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Կարօեանի կողմէ, շրջապատուած քահանայական դասով:

— Թաղին մէջ բնակող կամ կալուածատէր «Յարութիւն» անունը կրողները եկեղեցւոյ կնքահայրութիւնը պիտի ստանձնեն:

— Յայտնի եւ սիրուած դպիրներ իրենց սիրայօժար մասնակցութիւնը պիտի բերեն:

ՍԵՂԱՆԻ ՕԾՈՒՄ - ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ

(Կիրակի 28 Հոկ. 1934 ժամը 8ին)

— Պիտի կատարուի մեծ շուքով եւ պատրաստութեամբ հայրապետական պատարագ մասնակցութեամբ՝ թեմիս եպիսկոպոս, վարդապետ եւ քահանաներուն.

— Պիտի հրաւուրուին օտար անձնաւորութիւններ.

— Անթիլիասի դպրեպանքի սաները պիտի կատարեն երգեցողութիւնք՝ նուագով.

— Հոգեշունչ քարոզ Ն. Ս. Օ. Վեհափառին կողմէ.

— Հոգեհանգիստ.


Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂՑԻՈՅ
ՀԻՄՆՕՐԶՆԷՔԻ ԵՒ ՕԾՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՀՐԱԲԻՐԱՏՈՍՍ

Կիրակի 14 Հոկ. 1934 (ժամը 8ին)

Consécration: Dimanches le 14 - 10 - 34

ԱՆՀԱՏԱԿԱՆ



Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂՑԻՈՅ
ՍԵՂԱՆԻ ՕԾՈՒՄ, ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

ՀՐԱԲԻՐԱՏՈՍՍ

Կիրակի 28 Հոկ. 1934 (ժամը 8ին)
Première Messe Pontificale Dimanche le 28 - 10 - 34

ԱՆՀԱՏԱԿԱՆ

CARTE PERSONNELLE

ՀՐԱԲԻՐԵԱՆՆԵՐՈՒՆ, ՀԱՆԳԻԹՍԻՆ համար եւ անադմու կ' ձեւով արարողութեանց հանդիսատես ըլլալու՝ հետեւեալ բացառիկ միջոցները ձեռք առնուած են:

Նկատելով որ այսպիսի հազուագիւս առիթներուն բարեպաշտ եւ լուրջ ազգայիններ կը գրկուին զանազան արգելիքներով. հանդիսութեանց ներկայ պիտի ըլլան անոնք՝ որոնք ներփակուած հրաւիրատուներ կը ներկայացնեն:

Երեսասարդներ պիտի ապահովեն կարգապահութիւնը եւ միայն օտար հիւրերուն տեղաւորումը:

Ամէն տոմսին տէր պահոված պիտի ըլլայ իր արքուն: Արքունները քիւ. չունին կարգաւ պիտի գտնուին:

**ՀԱՆԴԻՍԱԽՈՐՈՒԹԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ
ՈՁ ՄԷԿ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ
ԿԱՄ ՆԻԹԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ**

— Այս հրաւիրատոմսերը ստացողներէն ջերմապէս կը խնդրուի որ իրենց նուէրը հասնին շինութեան Յանձնախումբին դրկել՝ արարողութեանց նշանակուած թուականէն առաջ:

Նուիրատուներու ցանկը հետզհետէ պիտի հրատարակուին թերթի միջոցաւ:

Կը խնդրուի այս հրաւիրատոմսերը պարզել կարգապահութիւնը խստիւ ապահովելու համար:

Երախաներուն մուտքը բացարձակապէս արգիւնուած է:

**ՈՒՂԵԳԻԾ
Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԵՐԹԱՂՈՒ**

—>>>*<<<—

— Նահրի հանրակառքը առնել եւ իջնել կամուրջի մօտ, վերջին կայարան:

— Հետեւիլ նոր պողոտային՝ մօտաւորապէս 200 մէթր, մինչեւ որ աջ թեւի վրայ եկեղեցին երեւայ, եւ խոշոր ազդագիր մը ձեզ պիտի առաջնորդէ:

ՀԱՅԵՐ, ԽՄԲՈՎ, ԵԿԷՔ

ՎԱՅԵԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

ձեր առաքինութեան արդիւնքներէն մին.

ՔԱԶԱԼԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

հայ բազուկի եւ առողջ մտայնութեան վերաշինիչ ոգին.

ԿԱԶԴՈՒՐՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

Հայաստանեայց եկեղեցիի մը մէջ՝ հայրենաբոյր ծէսով, հոգեշինիչ եւ պատուական արարողութեանց միջոցին:

Pour se rendre à la nouvelle église, veuillez suivre la Corniche du fleuve (côté droit), jusqu'à la pancarte à 200 m. du pont.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ձեր արտաբուլիս նուէրները հանեցէ՛ք դրկել Ազգային Առաջնորդարանին միջոցաւ կամ ուղղակի շինութեան Ֆանձնախումբի Ասեմապետ Տիար Վահրամ Վարժապետեանի՝ Պանֆսը Սիրիի (Banque de Syrie et du Grand Liban) S. E. գանձապահին:

— Հրաւիրատուն պիտի դրկուի ծանօթ ազգայիններուն եւ առաւելապէս անոնց՝ որոնք մինչեւ ցարդ տեւէ ձեռով կամ գումարով օժանդակած են Ա. Ֆարութեան (Նախկին Ա.Երրորդութեան) Եկեղեցիին: Իսկ անոնք որոնք հրաւիրագիր չեն ստացած եւ կը փափաքին ստանալ, բող հանին դիմել Ազգ. Առաջնորդարան:

— Նուիրատուներէն կը խնդրուի նկատառնել վնարուելիք պարսփը (տե՛ս հաշուեկէիւ) եւ փութացնել իրենց նուէրները:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

«Երէ Հայ Եկեղեցիի պատմութիւնը՝ իր ընդհանուր տեսութեանը մէջ՝ ախտաւոր երեւոյթ մը եղած ըլլար մեր **ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ** կեանքին համար՝ եւ պիտի համարձակէի ըսել, պատճեն աչդ եջերը, որոնցմէ մոխիրի կամ մամուռի հոտ մը կուգայ, աւերածի կամ փտութեան, ու թոյլ չտանք մանաւանդ որ Նոր Ստեանդը գործունէնաւ աշխարհիկներու յիշատակին հետ՝ որքովս մեծօրէն հիւանդացուցեր են մեր հոգին: Բարեբախտաբար ստոր հակառակն է թոյրովին ինչ որ դուրս կուգայ մեր Եկեղեցիի պատմութենէն, որը իր լուրջ ազդեցութիւնը պէտք է ներգործէ մեր մտքին, մեր նկարագրին ու մեր **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ** փայլը:»

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0171978

ԲՄ

